ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԳՀԱՊՁԲ-21-7/52-2

ք. Երևան 13 .10.2021թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կ. Բրուտյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և «ԳԴԱԿ» ՍՊԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Ս. Երանոսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Ձննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.1.9 Ապրանքների ընդունման գործընթացն իրականացնել ՀՀ պաշտպանության նախարարի 22.02.2019թ. N 177 հրամանի պահանջների համաձայն (հրամանը հրապարակված է http://mil.am կայքի «Գրադարան» բաժնի «ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆՆԵՐ» ենթաբաժնում):

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում 11 460 000 (տասնմեկ միլիոն չորս հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 10.12.2021թ:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[1] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը

---

[1] Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

գել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել

[illegible]խքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՋՈՒ թիկունքի վարչությունը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011144079 ՀՎՀՀ 02522157 ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կ. ԲՐՈՒՏՅԱՆ	«ԳԴԱԿ» ՍՊԸ ք.Երևան, Սարի-թաղ 1-ին շարք տ.8 «Արդշինբանկ» ՓԲԸ Հ/Հ 2470100487150000 ՀՎՀՀ 00432114 Տնօրեն Ս. ԵՐԱՆՈՍՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-21-7/52-2 ծածկագրով
գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

1. **Օձիք բնական կարակուլից /հատ/:** ԳՕՍՏ-7069-2014, օձիքը բաղկացած է մոխրագույն ազնվացեղ ոչխարի կարակուլից, ԳՕՍՏ-3157-69: Պարկանման ներդիրով: Ներդիրը՝ բրդյա գործվածքից: Համազգեստին կոճկելու համար, օձիքի ներքին եզրին հավասարաչափ հեռավորության վրա կարված են 5 հատ օղակներ, ընդ որում՝ 1-ին և 5-րդ օղակները պետք է լինեն 3.0-4.0 սմ եզրից դեպի ներս հեռավորության վրա, իսկ բրդյա ներդիրի ներքին եզրից 2.0-2.5 սմ դեպի ներս հավասարաչափ հեռավորության վրա կարված են 4 հատ կոճկման օղակներ՝ ընդ որում 1-ին և 4-րդ օղակները պետք է լինեն 4.0-4.5 սմ եզրից դեպի ներս հեռավորության վրա: Օձիքի արտաքին տեսքը **հավելված 1 նկար 2:**

Փաթեթավորումը՝ ստվարաթղթե տուփերով, տուփի մեջ՝ 5 հատ: Տուփերը պիտակավորված կամ տպագրված, որի վրա պետք է նշված լինի արտադրանքի անվանումը, արտադրող և մատակարար կազմակերպության անվանումը, քանակը, արտադրման տարեթիվը:

Յուրաքանչյուր մատակարարված խմբաքանակի համար մատակարար կազմակերպությունը պարտավոր է իր ֆինանսական միջոցների հաշվին ներկայացնել ՀՀ-ում հավաստագրված, արտոնագրված կամ անհրաժեշտության դեպքում էտալոնային փորձագիտական լաբորատորիայի կողմից տրված բնական կարակուլի վերաբերյալ վերաբերյալ եզրակացություն: Ընդ որում նմուշառումը պետք է կատարվի ընդունող ստորաբաժանում մատակարարված խմբաքանակից՝ լաբորատորիայի կողմից գործուղված համապատասխան մասնագետի մասնակցությամբ:

2. **Ուսադիր գնդապետի /զույգ/:** Ուսադիրը ուղղանկյունաձև է, որի լայնակի մեկ կողմը ունի թեք կտրվածքներ: Թեք կտրվածքներով լայնակի կողմում, եզրից 8.0 մմ դեպի ներս՝ կենտրոնում, մշակված է 5.0 մմ տրամագծով անցք, իսկ հակադիր կողմի ներքին եզրակարից՝ ուսադիրի ամբողջ երկայնքի կենտրոնով ամրանում է պոլիվինիլքլորիդե /ՊՎԽ/ նյութից պատրաստված ամրացման լեզվակը, որի վերջնամասում՝ եզրից 8.0 մմ դեպի ներս, ուսադիրի ամրացման համար մշակվում է 5.0 մմ տրամագծով անցք: Ամրացման լեզվակի լայնությունը 2.5 սմ: Ուսադիրի արտաքին մասը մշակված է դեղնականաչավուն գույնի պոլիամիդե գործվածքից, որի վրա դեղին գույնի արհեստական թելով՝ ուսադիրի ստորին եզրից 25-ական մմ հեռավորության վրա և իրարից՝ կենտրոնից կենտրոն 25 մմ հեռավորության վրա ասեղնագործված են երկու հատ 20 մմ տրամագծով աստղեր և դրանցից 25 մմ հեռավորության վրա՝ կենտրոնում ասեղնագործված է ևս մեկ հատ 20 մմ տրամագծով աստղ: Ուսադիրի հակադարձ կողմը պետք է պատված լինի նույն երանգի առնվազն 210 գրամ մակերեսային խտությամբ գործվածքով: Ուսադիրի հակադարձ կողմում՝ ներքին եզրակարից 3.5 սմ հեռավորության վրա ուսադիրի լայնությամբ մշակված է 2.0 սմ լայնքով պոլիվինիլքլորիդե /ՊՎԽ/ թաղանթից կամրջակ, որի միջով անցնում է ուսադիրի ամրացման լեզվակը: Ուսադիրների երկարությունը՝ 12.5 սմ և 13.5 սմ, իսկ լայնությունը՝ 5.0 սմ: Մատակարարվելիք քանակի 40%-ը պետք է լինի 12.5 սմ երկարության, իսկ 60%-ը՝ 13.5 սմ:

Փաթեթավորումը արկղերով, քանակը մեկ արկղում՝ մինչև 350 զույգ: Արկղերը պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, մատակարար և արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը: Բոլոր չափսերի թույլատրելի շեղումը մինչև 3%: Ուսադիրի դաշտի զարդանախշը՝ **հավելված 1 նկար 6:**

3. **Ուսադիր փոխգնդապետի /զույգ/:** Ուսադիրը ուղղանկյունաձև է, որի լայնակի մեկ կողմը ունի թեք կտրվածքներ: Թեք կտրվածքներով լայնակի կողմում, եզրից 8.0 մմ դեպի ներս՝ կենտրոնում, մշակված է 5.0 մմ տրամագծով անցք, իսկ հակադիր կողմի ներքին եզրակարից՝ ուսադիրի ամբողջ երկայնքի կենտրոնով ամրանում է պոլիվինիլքլորիդե /ՊՎԽ/ նյութից պատրաստված ամրացման լեզվակը, որի վերջնամասում՝ եզրից 8.0 մմ դեպի ներս, ուսադիրի ամրացման համար մշակվում է 5.0 մմ տրամագծով անցք: Ամրացման լեզվակի լայնությունը 2.5 սմ: Ուսադիրի արտաքին մասը մշակված է դեղնականաչավուն գույնի պոլիամիդե գործվածքից, որի վրա դեղին գույնի արհեստական թելով՝ ուսադիրի ստորին եզրից 25-ական մմ հեռավորության վրա և իրարից՝ կենտրոնից կենտրոն 25 մմ հեռավորության վրա ասեղնագործված են երկու հատ 20 մմ տրամագծով աստղեր: Ուսադիրի հակադարձ կողմը պետք է պատված լինի նույն երանգի առնվազն 210 գրամ մակերեսային խտությամբ գործվածքով: Ուսադիրի հակադարձ կողմում՝ ներքին եզրակարից 3.5 սմ հեռավորության վրա ուսադիրի լայնությամբ մշակված է 2.0 սմ լայնքով պոլիվինիլքլորիդե /ՊՎԽ/ թաղանթից կամրջակ, որի միջով անցնում է ուսադիրի ամրացման լեզվակը: Ուսադիրների երկարությունը՝ 12.5 սմ և 13.5 սմ, իսկ լայնությունը՝ 5.0 սմ: Մատակարարվելիք քանակի 40%-ը պետք է լինի 12.5 սմ երկարության, իսկ 60%-ը՝ 13.5 սմ:

Փաթեթավորումը արկղերով, քանակը մեկ արկղում՝ մինչև 500 զույգ: Արկղերը պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, մատակարար և արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը: Բոլոր չափսերի թույլատրելի շեղումը մինչև 3%: Ուսադիրի դաշտի զարդանախշը՝ **հավելված 1 նկար 6:**

4. **Ուսադիր մայորի /զույգ/:** Ուսադիրը ուղղանկյունաձև է, որի լայնակի մեկ կողմը ունի թեք կտրվածքներ: Թեք կտրվածքներով լայնակի կողմում, եզրից 8.0 մմ դեպի ներս՝ կենտրոնում, մշակված է 5.0 մմ տրամագծով անցք, իսկ հակադիր կողմի ներքին եզրակարից՝ ուսադիրի ամբողջ երկայնքի կենտրոնով ամրանում է պոլիվինիլքլորիդե /ՊՎԽ/ նյութից պատրաստված ամրացման լեզվակը, որի վերջնամասում՝ եզրից 8.0 մմ դեպի ներս, ուսադիրի ամրացման համար մշակվում է 5.0 մմ տրամագծով անցք: Ամրացման լեզվակի լայնությունը 2.5 սմ: Ուսադիրի արտաքին մասը մշակված է դեղնականաչավուն գույնի պոլիամիդե գործվածքից, որի վրա դեղին գույնի արհեստական թելով՝ ուսադիրի ստորին եզրից 45 մմ հեռավորության վրա՝ ուսադիրի կենտրոնում ասեղնագործված է մեկ հատ 20 մմ տրամագծով աստղ: Ուսադիրի հակադարձ կողմը պետք է պատված լինի նույն երանգի առնվազն 210 գրամ մակերեսային խտությամբ գործվածքով: Ուսադիրի հակադարձ կողմում՝ ներքին եզրակարից 3.5 սմ հեռավորության վրա ուսադիրի լայնությամբ մշակված է 2.0 սմ լայնքով պոլիվինիլքլորիդե /ՊՎԽ/ թաղանթից կամրջակ, որի միջով անցնում է ուսադիրի ամրացման լեզվակը: Ուսադիրների երկարությունը՝ 12.5 սմ և 13.5 սմ, իսկ լայնությունը՝ 5.0 սմ: Մատակարարվելիք քանակի 40%-ը պետք է լինի 12.5 սմ երկարության, իսկ 60%-ը՝ 13.5 սմ:

Փաթեթավորումը արկղերով, քանակը մեկ արկղում՝ մինչև 500 զույգ: Արկղերը պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, մատակարար և արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը: Բոլոր չափսերի թույլատրելի շեղումը մինչև 3%: Ուսադիրի դաշտի զարդանախշը՝ **հավելված 1 նկար 6**:

5. <u>**Ուսադիր կապիտանի /զույգ/:**</u> Ուսադիրը ուղղանկյունաձև է, որի լայնակի մեկ կողմը ունի թեք կտրվածքներ: Թեք կտրվածքներով լայնակի կողմում, եզրից 8.0 մմ դեպի ներս՝ կենտրոնում, մշակված է 5.0 մմ տրամագծով անցք, իսկ հակադիր կողմի ներքին եզրակարից՝ ուսադիրի ամբողջ երկայնքի կենտրոնով ամրանում է պոլիվինիլքլորիդե /ՊՎԽ/ նյութից պատրաստված ամրացման լեզվակը, որի վերջնամասում՝ եզրից 8.0 մմ դեպի ներս, ուսադիրի ամրացման համար մշակվում է 5.0 մմ տրամագծով անցք: Ամրացման լեզվակի լայնությունը 2.5 սմ: Ուսադիրի արտաքին մասը մշակված է դեղնականաչավուն գույնի պոլիամիդե գործվածքից, որի վրա դեղին գույնի արհեստական թելով՝ ուսադիրի ստորին եզրից 25-ական մմ հեռավորության վրա և իրարից՝ կենտրոնից կենտրոն 25 մմ հեռավորության վրա ասեղնագործված են երկու հատ 13 մմ տրամագծով աստղեր և դրանցից 25-ական մմ հեռավորության վրա՝ կենտրոնում՝ ասեղնագործված են ևս երկու հատ 13 մմ տրամագծով աստղեր: Ուսադիրի հակադարձ կողմը պետք է պատված լինի նույն երանգի առնվազն 210 գրամ մակերեսային խտությամբ գործվածքով: Ուսադիրի հակադարձ կողմում՝ ներքին եզրակարից 3.5 սմ հեռավորության վրա ուսադիրի լայնությամբ մշակված է 2.0 սմ լայնքով պոլիվինիլքլորիդե /ՊՎԽ/ թաղանթից կամրջակ, որի միջով անցնում է ուսադիրի ամրացման լեզվակը: Ուսադիրների երկարությունը՝ 12.5 սմ և 13.5 սմ, իսկ լայնությունը՝ 5.0 սմ: Մատակարարվելիք քանակի 40%-ը պետք է լինի 12.5 սմ երկարության, իսկ 60%-ը՝ 13.5 սմ:

Փաթեթավորումը արկղերով, քանակը մեկ արկղում՝ մինչև 200 զույգ: Արկղերը պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, մատակարար և արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը: Բոլոր չափսերի թույլատրելի շեղումը մինչև 3%: Ուսադիրի դաշտի զարդանախշը՝ **հավելված 1 նկար 6**:

6. <u>**Ուսադիր ավագ լեյտենանտի /զույգ:**</u> Ուսադիրը ուղղանկյունաձև է, որի լայնակի մեկ կողմը ունի թեք կտրվածքներ: Թեք կտրվածքներով լայնակի կողմում, եզրից 8.0 մմ դեպի ներս՝ կենտրոնում, մշակված է 5.0 մմ տրամագծով անցք, իսկ հակադիր կողմի ներքին եզրակարից՝ ուսադիրի ամբողջ երկայնքի կենտրոնով ամրանում է պոլիվինիլքլորիդե /ՊՎԽ/ նյութից պատրաստված ամրացման լեզվակը, որի վերջնամասում՝ եզրից 8.0 մմ դեպի ներս, ուսադիրի ամրացման համար մշակվում է 5.0 մմ տրամագծով անցք: Ամրացման լեզվակի լայնությունը 2.5 սմ: Ուսադիրի արտաքին մասը մշակված է դեղնականաչավուն գույնի պոլիամիդե գործվածքից, որի վրա դեղին գույնի արհեստական թելով՝ ուսադիրի ստորին եզրից 25-ական մմ հեռավորության վրա և իրարից՝ կենտրոնից կենտրոն 25 մմ հեռավորության վրա ասեղնագործված են երկու հատ 13 մմ տրամագծով աստղեր և դրանցից 25 մմ հեռավորության վրա՝ կենտրոնում ասեղնագործված է ևս մեկ հատ 13 մմ տրամագծով աստղ: Ուսադիրի հակադարձ կողմը պետք է պատված լինի նույն երանգի առնվազն 210 գրամ մակերեսային խտությամբ գործվածքով: Ուսադիրի հակադարձ կողմում՝ ներքին եզրակարից 3.5 սմ հեռավորության վրա ուսադիրի լայնությամբ մշակված է 2.0 սմ լայնքով պոլիվինիլքլորիդե /ՊՎԽ/ թաղանթից կամրջակ, որի միջով անցնում է ուսադիրի ամրացման լեզվակը: Ուսադիրների երկարությունը՝ 12.5 սմ և 13.5 սմ, իսկ լայնությունը՝ 5.0 սմ: Մատակարարվելիք քանակի 40%-ը պետք է լինի 12.5 սմ երկարության, իսկ 60%-ը՝ 13.5 սմ:

Փաթեթավորումը արկղերով, քանակը մեկ արկղում՝ մինչև 200 զույգ: Արկղերը պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, մատակարար և արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը: Բոլոր չափսերի թույլատրելի շեղումը մինչև 3%: Ուսադիրի դաշտի զարդանախշը՝ **հավելված 1 նկար 6**:

7. <u>**Ուսադիր լեյտենանտի /զույգ/:**</u> Ուսադիրը ուղղանկյունաձև է, որի լայնակի մեկ կողմը ունի թեք կտրվածքներ: Թեք կտրվածքներով լայնակի կողմում, եզրից 8.0 մմ դեպի ներս՝ կենտրոնում, մշակված է 5.0 մմ տրամագծով անցք, իսկ հակադիր կողմի ներքին եզրակարից՝ ուսադիրի ամբողջ երկայնքի կենտրոնով ամրանում է պոլիվինիլքլորիդե /ՊՎԽ/ նյութից պատրաստված ամրացման լեզվակը, որի վերջնամասում՝ եզրից 8.0 մմ դեպի ներս, ուսադիրի ամրացման համար մշակվում է 5.0 մմ տրամագծով անցք: Ամրացման լեզվակի լայնությունը 2.5 սմ: Ուսադիրի արտաքին մասը մշակված է դեղնականաչավուն գույնի պոլիամիդե գործվածքից, որի վրա դեղին գույնի արհեստական թելով՝ ուսադիրի ստորին եզրից 25-ական մմ հեռավորության վրա և իրարից՝ կենտրոնից կենտրոն 25 մմ հեռավորության վրա ասեղնագործված են երկու հատ 13 մմ տրամագծով աստղեր: Ուսադիրի հակադարձ կողմը պետք է պատված լինի նույն երանգի առնվազն 210 գրամ մակերեսային խտությամբ գործվածքով: Ուսադիրի հակադարձ կողմում՝ ներքին եզրակարից 3.5 սմ հեռավորության վրա ուսադիրի լայնությամբ մշակված է 2.0 սմ լայնքով պոլիվինիլքլորիդե /ՊՎԽ/ թաղանթից կամրջակ, որի միջով անցնում է ուսադիրի ամրացման լեզվակը: Ուսադիրների երկարությունը՝ 12.5 սմ և 13.5 սմ, իսկ լայնությունը՝ 5.0 սմ: Մատակարարվելիք քանակի 40%-ը պետք է լինի 12.5 սմ երկարության, իսկ 60%-ը՝ 13.5 սմ:

Փաթեթավորումը արկղերով, քանակը մեկ արկղում՝ մինչև 100 զույգ: Արկղերը պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, մատակարար և արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը: Բոլոր չափսերի թույլատրելի շեղումը մինչև 3%: Ուսադիրի դաշտի զարդանախշը՝ **հավելված 1 նկար 6**:

8. <u>**Ուսադիր ենթասպայի /զույգ/:**</u> Ուսադիրը ուղղանկյունաձև է, որի լայնակի մեկ կողմը ունի թեք կտրվածքներ: Թեք կտրվածքներով լայնակի կողմում, եզրից 8.0 մմ դեպի ներս՝ կենտրոնում, մշակված է 5.0 մմ տրամագծով անցք, իսկ հակադիր կողմի ներքին եզրակարից՝ ուսադիրի ամբողջ երկայնքի կենտրոնով ամրանում է՝ պոլիվինիլքլորիդե /ՊՎԽ/ նյութից պատրաստված ամրացման լեզվակը, որի վերջնամասում՝ եզրից 8.0 մմ դեպի ներս, ուսադիրի ամրացման համար մշակվում է 5.0 մմ տրամագծով անցք: Ամրացման լեզվակի լայնությունը 2.5 սմ: Ուսադիրի արտաքին մասը մշակված է դեղնականաչավուն գույնի պոլիամիդե գործվածքից, որի վրա, կենտրոնում՝ դեղին գույնի արհեստական թելով՝ ուսադիրի ստորին եզրից 25 մմ և իրարից՝ կենտրոնից կենտրոն 25 մմ հեռավորության վրա ասեղնագործված են երկու հատ 13 մմ տրամագծով աստղեր: Ուսադիրի հակադարձ կողմը պետք է պատված լինի նույն երանգի առնվազն 210 գրամ մակերեսային խտությամբ գործվածքով: Ուսադիրի հակադարձ կողմում՝ ներքին եզրակարից 3.5 սմ հեռավորության վրա ուսադիրի լայնությամբ մշակված է 2.0 սմ լայնքով պոլիվինիլքլորիդե /ՊՎԽ/ թաղանթից կամրջակ, որի միջով անցնում է ուսադիրի ամրացման լեզվակը: Ուսադիրների երկարությունը՝ 12.5 սմ և 13.5 սմ, իսկ լայնությունը՝ 5.0 սմ: Մատակարարվելիք քանակի 40%-ը պետք է լինի 12.5 սմ երկարության, իսկ 60%-ը՝ 13.5 սմ:

Փաթեթավորումը արկղերով, քանակը մեկ արկղում՝ մինչև 250 զույգ: Արկղերը պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, մատակարար և արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը: Բոլոր չափսերի թույլատրելի շեղումը մինչև 3%: Ուսադիրի դաշտի զարդանախշը՝ **հավելված 1 նկար 6**:

9. <u>Ուսադիր ավագ ենթասպայի /զույգ/:</u> Ուսադիրը ուղղանկյունաձև է, որի լայնակի մեկ կողմը ունի թեք կտրվածքներ: Թեք կտրվածքներով լայնակի կողմում, եզրից 8.0 մմ դեպի ներս՝ կենտրոնում, մշակված է 5.0 մմ տրամագծով անցք, իսկ հակադիր կողմի ներքին եզրակարից՝ ուսադիրի ամբողջ երկայնքի կենտրոնով ամրանում է պոլիվինիլքլորիդե /ՊՎԽ/ նյութից պատրաստված ամրացման լեզվակը, որի վերջնամասում՝ եզրից 8.0 մմ դեպի ներս, ուսադիրի ամրացման համար մշակվում է 5.0 մմ տրամագծով անցք: Ամրացման լեզվակի լայնությունը 2.5 սմ: Ուսադիրի արտաքին մասը մշակված է դեղնականաչավուն գույնի պոլիամիդե գործվածքից, որի վրա, կենտրոնում՝ դեղին գույնի արհեստական թելով՝ ուսադիրի ստորին եզրից 25 մմ և իրարից՝ կենտրոնից կենտրոն 25-ական մմ հեռավորության վրա ասեղնագործված են երեք հատ 13 մմ տրամագծով աստղեր: Ուսադիրի հակադարձ կողմը պետք է պատված լինի նույն երանգի առնվազն 210 գրամ մակերեսային խտությամբ գործվածքով: Ուսադիրի հակադարձ կողմում՝ ներքին եզրակարից 3.5 սմ հեռավորության վրա ուսադիրի լայնությամբ մշակված է 2.0 սմ լայնքով պոլիվինիլքլորիդե /ՊՎԽ/ թաղանթից կամրջակ, որի միջով անցնում է ուսադիրի ամրացման լեզվակը: Ուսադիրների երկարությունը՝ 12.5 սմ և 13.5 սմ, իսկ լայնությունը՝ 5.0 սմ: Մատակարարվելիք քանակի 40%-ը պետք է լինի 12.5 սմ երկարության, իսկ 60%-ը՝ 13.5 սմ:

Փաթեթավորումը արկղերով, քանակը մեկ արկղում՝ մինչև 100 զույգ: Արկղերը պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, մատակարար և արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը: Բոլոր չափսերի թույլատրելի շեղումը մինչև 3%: Ուսադիրի դաշտի զարդանախշը՝ **հավելված 1 նկար 6:**

Ծանոթություն. (1-ին չափաբաժինների համար)

1. Մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է պատասխանատու ստորաբաժանման համաձայնեցմանը ներկայացնի.

1.1 Մեկ օրինակ նմուշ՝ արտաքին տեսքը համաձայնեցնելու համար: Հաստատված նմուշն հանդիսանում է պայմանագրով սահմանված քանակի մաս և ենթակա է մուտքագրման՝ վերջին խմբաքանակն ներկայացնելիս:

1.2 Նմուշի հետ համատեղ՝ մատակարար կազմակերպությունն պարտավոր է ներկայացնել արտադրման համար օգտագործված բոլոր նյութերն՝ ամրացված գծագրական թղթի վրա: Ներկայացված նմուշը ստորագրում է մատակարարը, համաձայնեցվում է ՀՀ ՋՈՒ Թվ իրային ծառայության պետի հետ և հաստատվում կամ մերժվում է ՀՀ ՋՈՒ թիկունքի պետ-վարչության պետի կողմից, ներկայացնելուց ոչ ուշ քան երեք աշխատանքային օրվա ընթացքում:

2. Մատակարարվող ապրանքատեսականին պետք է լինի նոր և չօգտագործված:

3. Չափսերը տրամադրվում են պատասխանատու ստորաբաժանման կողմից մատակարարումից առնվազն մեկ ամիս առաջ:

Ծանոթություն. (2-9-րդ չափաբաժինների համար)

1. Մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է պատասխանատու ստորաբաժանման համաձայնեցմանը ներկայացնի.

1.1 Մեկ օրինակ նմուշ՝ արտաքին տեսքը համաձայնեցնելու համար: Հաստատված նմուշն հանդիսանում է պայմանագրով սահմանված քանակի մաս և ենթակա է մուտքագրման՝ վերջին խմբաքանակն ներկայացնելիս:

1.2 Նմուշի հետ համատեղ՝ մատակարար կազմակերպությունն պարտավոր է ներկայացնել արտադրման համար օգտագործված բոլոր նյութերն՝ ամրացված գծագրական թղթի վրա: Ներկայացված նմուշը ստորագրում է մատակարարը, համաձայնեցվում է ՀՀ ՋՈՒ Թվ իրային ծառայության պետի հետ և հաստատվում կամ մերժվում է ՀՀ ՋՈՒ թիկունքի պետ-վարչության պետի կողմից, ներկայացնելուց ոչ ուշ քան երեք աշխատանքային օրվա ընթացքում:

2. Մատակարարվող ապրանքատեսականին պետք է լինի նոր և չօգտագործված

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Գնման առարկայի						
հ/հ	**անվանումը**	**չ/մ**	**քանակը**	**միավորի գինը (ՀՀ դրամ)**	**ընդհանուր գումարը (ՀՀ դրամ)**	**Մատակարարումը 2021թ. ըստ եռամսյակների, ընդ որում՝**
						4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 30.11.2021թ.
1	Օձիք բնական կարակուլից	հատ	220	39000	8580000	220
2	ՈՒսադիր գնդապետի	զ-գ	350	1440	504000	350
3	ՈՒսադիր փոխգնդապետի	զ-գ	500	1380	690000	500
4	ՈՒսադիր մայորի	զ-գ	500	1320	660000	500
5	ՈՒսադիր կապիտանի	զ-գ	200	1230	246000	200
6	ՈՒսադիր ավագ լեյտենանտի	զ-գ	200	1200	240000	200
7	ՈՒսադիր լեյտենանտի	զ-գ	100	1200	120000	100
8	ՈՒսադիր ենթասպայի	զ-գ	250	1200	300000	250
9	ՈՒսադիր ավագ ենթասպայի	զ-գ	100	1200	120000	100

Ծանոթություն ապրանքատեսակները պետք է մատակարարվեն ՀՀ ՊՆ կենտրոնական իրային բազա (ք. Երևան, Արցախի 61) մատակարար կազմակերպության միջոցով:

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«ԳԴԱԿ» ՍՊԸ տնօրեն

Ս. ԵՐԱՆՈՍՅԱՆ

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-21-7/52-2 ծածկագրով
գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/հ	Գնման առարկայի անվանումը	CPV կոդը	Նախատեսվում է ֆինանսավորել 2021թ. ըստ եռամսյակների, բայց ոչ ուշ, քան 10.12.2021թ., ընդ որում՝
			4-րդ եռամսյակ
1	Օձիք բնական կարակուլից	18421400/4	8580000
2	ՈՒսադիր գնդապետի	35811190/65	504000
3	ՈՒսադիր փոխգնդապետի	35811190/66	690000
4	ՈՒսադիր մայորի	35811190/67	660000
5	ՈՒսադիր կապիտանի	35811190/68	246000
6	ՈՒսադիր ավագ լեյտենանտի	35811190/69	240000
7	ՈՒսադիր լեյտենանտի	35811190/70	120000
8	ՈՒսադիր ենթասպայի	35811190/72	300000
9	ՈՒսադիր ավագ ենթասպայի	35811190/71	120000

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«ԳԴԱԿ» ՍՊԸ տնօրեն

Գ. ՄԵՐԱՆՈՍՅԱՆ

Հավելված 1



(Նկար 2)



(Նկար 6)

Հավելված N 3
N ԳՀԱՊՁԲ-21-7/52-2 ծածկագրով
գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
N ԳՀԱՊՁԲ-21-7/52-2 ծածկագրով
գնման պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն